# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

08 ապրիլի 2013թ

ՄՔԵ/025-124

ՄԱՐԱԼԻԿ, Մաղաթյան 1

Հեռախոս: (0242) 2 - 22 - 37

Ֆաքս: (0242) 2 - 24 - 00

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ՊԱՐՈՆ Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան

Ի պատասխան Ձեր 25 մարտի 2013 թվականի N 02.2/1324-13 գրության՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 65, թիվ 66 և 69-Ն որոշման վերաբերյալ առարկությունները ընդունվել են ի գիտություն և համապատասխանեցվել են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ      Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

*Կատարող՝ Ք. Մկոյան*
*Հեռ. 0242-2-29-11*

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մուտք թիվ 2666-13
08. 04 13թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 65

09 նոյեմբերի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ կետի և 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը սահմանել Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի պատգամավորի աշխատավարձի՝ 331595 (երեք հարյուր երեսունմեկ հազար հինգ հարյուր իննսունհինգ) դրամի 60.0 %-ի դրույքաչափով՝ 200 000 (երկու հարյուր հազար) դրամ:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանու 2011 թվականի նոյեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատելու մասին» թիվ 56 որոշումը:
3. Որոշումը ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ
ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

09 նոյեմբերի 2012 թվական
ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# **Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 66**

09 նոյեմբերի 2012 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով և 31-րդ հոդվածով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի, «Իրավական ակտերի մասին» հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հեդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով

<u>Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.</u>

1. Հաստատել Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել 2012 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 62 որոշումը:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում 2013թվականի հունվարի 1-ից:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

09 նոյեմբերի 2012 թվական
ք. Մարալիկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 69-Ն

09 նոյեմբերի 2012 թվական

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20 կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 76-80-րդ հոդվածների դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը մրցութային եղանակով մեկ հեկտար հողամասի տրամադրման համար մեկնարկային վարձավճարի հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է.

09 նոյեմբերի 2012 թվական

ք. Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 69-Ն ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

| Հ/Հ | Հողատեսքը | Ծածկագիրը | Մակերեսը /հա/ | | Գնահատման խումբը | Մեկնարկային վարձավճարը 1հա-ի համար /դրամ/ | Տրամադրման ժամկետը | Լոտերի քանակը | Տրամադրման նպատակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ջրովի | անջրդի | | | | | |
| 1 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-123-135 | 3.0 | - | II | 17000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 2 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-123-136 | 5.5 | - | II | 17000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 3 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-123-111 | - | 1.42 | III | 7000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 4 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-147-1 | 1.4 | - | II | 17000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 5 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-138-1 | 1.5 | - | II | 17000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 6 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-131-2 | - | 1.62 | III | 7000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 7 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-111-16 | - | 0.858 | III | 7000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 8 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-111-14 | - | 0.247 | III | 7000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 9 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-123-179 | - | 1.489 | IV | 6000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 10 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-123-180 | - | 0.367 | IV | 6000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 11 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-142-188 | - | 0.990 | IV | 6000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 12 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-142-186 | - | 1.07 | IV | 6000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 13 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-134-11 | 0.25 | - | II | 17000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 14 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-134-41 | 0.15 | - | II | 17000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 15 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-134-26 | 0.191 | - | II | 17000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |
| 16 | գյուղ. նշանակության վարելահող | 08-003-123-216 | | 1.763 | IV | 6000 | 10 (տաս) տարի | 1 | գյուղատնտեսական մշակաբույսերի մշակման համար |